ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2024 թվականի դեկտեմբերի 18-ին կայացած գիտական Խորհրդի N 8 նիստի

Նախագահ – Ս.Ս.Քեյլյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 32 անդամներից 24-ը (ցուցակը կցվում է)

Նիստի մեկնարկից առաջ հայտարարվեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրվեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. **Ուսանողների հաճախումները և աշխատանքային կարգապահությունը ֆակուլտետում**
/զեկ.գրասենյակի ղեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/

2. **Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի ասպիրանտի ատենախոսական թեմայի և գիտական ղեկավարի հաստատում**
/զեկ.ամբ.վարչներ/

3. **Պետական ֆինանսավորմամբ գիտական թեմաների հաստատում**
/զեկ.ամբ.վարչի ժ/պ Ա.Ս.Փիլոյան/

4. **«Սերվիսի» ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարած աշխատանքների վերաբերյալ**
/զեկ.ամբ վարիչ Ս.Ռ.Սուվարյան/

5. **Ընթացիկ հարցեր**

Օրակարգը հաստատելուց հետո

1. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ Գ.Փ.Ալեքսանյանի հաղորդումը **ուսանողների հաճախումները և աշխատանքային կարգապահության վերաբերյալ:** Հաղորդման ընթացքում դոց.Գ.Ալեքսանյանն ամփոփ ներկայացրեց ուսանողների հաճախումները նվազագույնին հասցնելու համար իրականացվող քայլերը: Խոսքի ավարտին

Գ.Ալեքսանյանը հույս հայտնեց, որ վերոնշված գործընթացները կնպաստեն խնդրի լուծմանը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Ա.Թ.Գրիգորյանը**, Երկրաֆիզիկայի, ինժեներային և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ **դոց.Մ.Ս.Մկրտչյանը**, Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Վ.Մ.Մանուկյանը** և Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Ս.Փիլոյանը** իրենց խոսքում նշեցին, որ ուսանողների հաճախումները նվազում են կուրսերի բարձրացմանը զուգահեռ: Ելույթների ընթացքում եղան առաջարկներ՝ մոտիվացնել ուսանողներին կրթաթոշակների հատկացմամբ կամ/և հավելյալ ֆինանսական աջակցությամբ: Երկրաֆիզիկայի, ինժեներային և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի պրոֆեսոր **Ս.Հ.Հայրոյանն** ուսանողների բացակայությունը ուղղակիորեն կապեց կրթական ծրագրերի ընդհանրացված լինելու հետ: Վերջինս խնդրի լուծումը տեսավ ուսանողներին վերանայված և նոր կթական ծրագրեր առաջարկելով: Ելույթներն ամփոփեց գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **Գ.Փ.Ալեքսանյանը**, ով ներկայացրեց բացակայությունների վիճակագրությունը և նշեց, որ բացակայող ուսանողներին դեկանի կողմից տրվելու են «նկատողություն» և «խիստ նկատողություն»՝ կախված բացակաների քանակից: Խոսեց նաև աշխատանքային կարգապահության մասին, դասախոսների ուշացումների, քննությունների օրերի անփոփոխ լինելու և դասամատյանների լրացման կարգի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Ս.Փիլոնայի** հաղորդումը նույն ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Ֆրեդ Ֆուրմանի Ախոյանի ատենախոսական թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Ֆրեդ Ֆուրմանի Ախոյանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել **«Բարձր լուծաչափի նկարների կիրառումը ՀՀ պաշտպանության և անվտանգության ապահովման և ամենամյա տեղագրական քարտեզների թարմացման նպատակով»** («Աշխարհագրություն» (Քարտեզագրություն և գեոմորֆոլոգիա), դասիչ՝ ԻԴ.03.01), իսկ գիտական ղեկավար նշանակել տեխնիկական գիտությունների դոկտոր Հովսեփ Սերգեյի Պետրոսյանին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. **Ղեկավար տեխ.գիտ.դոկտոր Հովսեփ Սերգեյի Պետրոսյանը** ներկայացրեց նախատեսվող մեծածավալ աշխատանքների բնույթը, մշակված մեթոդիկայի կիրառությունն աշխատանքում, ինչպես նաև ներկայացրեց պաշտպանվող ատենախոսական դրույթները: Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Ա.Թ.Գրիգորյանը,** Երկրաֆիզիկայի, ինժեներային և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի **դոց.Ա.Հ.Աղինյանը,** Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի **պրոֆ.Պ.Ս.Էֆենդյանը:** Նշեցին ներկայացված պաշտպանվող դրույթների, դրված խնդրների ու դրանց լուծումների, ուսունասիրման օբյեկտների ու առարկայի անհաապատասխանությունը:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Ֆրեդ Ֆուրմանի Ախոյանի **«Բարձր լուծաչափի նկարների կիրառումը ՀՀ պաշտպանության և անվտանգության ապահովման և ամենամյա տեղագրական քարտեզների թարմացման նպատակով»** («Աշխարհագրություն» (Քարտեզագրություն և գեոմորֆոլոգիա), դասիչ՝ ԻԴ.03.01) վերնագրով ատենախոսության թեման վերադարձնել ամբիոն՝ հավելյալ քննարկման և լրամշակման նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Ֆրեդ Ֆուրմանի Ախոյանի **«Բարձր լուծաչափի նկարների կիրառումը ՀՀ պաշտպանության և անվտանգության ապահովման և ամենամյա տեղագրական քարտեզների թարմացման նպատակով»** («Աշխարհագրություն»

(Քարտեզագրություն և գեոմորֆոլոգիա), դասիչ՝ ԻԴ.03.01) վերնագրով ատենախոսության թեման վերադարձնել ամբիոն՝ հավելյալ քննարկման և լրամշակման նպատակով:

3. ԼՍԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի ժամանակավոր պաշտոնակատար Արտակ Սարգսի Փիլոյանի հաղորդումը ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարած **«Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2025»** մրցույթին մասնակցելու վերաբերյալ: Քննարկման ներկայացվեց **«Տարածական ուսումնասիրությունների և քաղաքային ինֆորմատիկայի կենտրոն»** վերնագրով թեման:

ՈՐՈՇԵՑԻՆ. **«Տարածական ուսումնասիրությունների և քաղաքային ինֆորմատիկայի կենտրոն»** վերնագրով թեման երաշխավորել ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարած **«Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2025»** մրցույթին մասնակցելու:

4. ԼՍԵՑԻՆ. Սերվիսի ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերբերյալ: (Հաշվետվությունը կցվում է):

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի ժամանակավոր պաշտոնակատար Արտակ Սարգսի Փիլոյանի հարցը վերաբերում էր մասնագիտության և մեծ ձեռնարկությունների համագործակցությանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. դոց.Գ.Փ.Ալեքսանյանն առաջարկեց **ընդունել** Սերվիսի ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի ներկայացրած հաշվետվությունը, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարած աշխատանքը գնահատել **դրական**:

ՈՐՈՇԵՑԻՆ. **Ընդունել** Սերվիսի ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի ներկայացրած հաշվետվությունը, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարած աշխատանքը գնահատել **դրական**:

5. Ընթացիկ հարցեր

5.1 ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ Գ.Փ.Ալեքսանյանի հաղորդումը **2024/2025 ուստարվա 2-րդ կիսամյակի դասացուցակների վերաբերյալ**: Հաղորդման ընթացքում ներկայացվեց դասացուցակների կազմման ընթացքը և առաջացած խնդիրները: Հաղորդման վերջում Գ.Փ.Ալեքսանյանը հորդորեց դասացուցակի և լսարանային համընկնումների հետ կապված խնդիրների մասին տեղեկացնել դեկանատին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

5.2 ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ Գ.Փ.Ալեքսանյանի հաղորդումը **2024/2025 ուստարվա 2-րդ կիսամյակի** մագիստրատուրայի պրակտիկայի արդյունքների վերաբերյալ: Նա մասնավորապես ներկայացրեց պրակտիկաների արդյունքները registrar համակարգ մուտք անելու ընթացակարգը և վերջնաժամկետները, խոսեց նաև ստուգարքների անցկացման ձևաչափի և ուսանողի կողմից նեկրայացվող պարտադիր փաստաթղթերի առկայության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ **Ս.Ս.Քելյան**

Գիտական խորհրդի քարտուղար **Ե.Ս.Մանուկյան**